ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32

Հեռ. (0237) 2-36-54

Ի պատասխան Ձեր ____________________ N __________

21.12.2011թ N 1138

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Արմավիրի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեն՝ հաստատված քաղաքային համայնքի ավագանու 19.12.2011թ. թիվ 14 նիստի թիվ 112-Ն որոշմամբ:

Առդիր 53 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԲԵՆ ԽԼՂԱԹՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ ԱՊ/12391-11
«21» 12 2011 թ.

Կատարող՝
Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Հեռ.՝ 2-31-76

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիրի քաղաքային համայնք, Հանրապետության 32, հեռ. (0237) 2-36-54

ՈՐՈՇՄԱՆ ՔԱՂՎԱԾՔ

« 13 » դեկտեմբերի 2011 թվականի N 112 -Ն

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

1. Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեի եկամուտները ըստ եկամտատեսակների՝ հատված 1-ին համապատասխան (հավելված N 1)

Ընդամենը՝ 620747,8 հազար դրամ.

2. Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեի ծախսերը՝ հատված 2-ում ներկայացված գործառնական դասակարգման համապատասխան (հավելված N 2)՝

Ընդամենը՝ 620747,8 հազար դրամ.

3. Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեի ծախսերը՝ հատված 3-ում ներկայացված տնտեսագիտական դասակարգման համապատասխան (հավելված N3)

Ընդամենը՝ 620747,8 հազար դրամ.

4. Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ պակասուրդը (դեֆիցիտը) հատված 4-ին համապատասխան (հավելված N 4)

Ընդամենը՝ 0.0 հազար դրամ.

5. Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրները հատված 5-ին համապատասխան (հավելված N 5)

Ընդամենը՝ 0.0 հազար դրամ.

6. Հաստատել Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեի ծախսերը՝ հատված 6-ում ներկայացված գործառնական և տնտեսագիտական դասակարգման համապատասխան (հավելված N 6)

Ընդամենը՝ 620747,8 հազար դրամ.

7. Սույն որոշման NN 1 - 6 հատվածները համարվում են սույն որոշման անբաժանելի մաս:

8. Թույլատրել Արմավիրի քաղաքապետին՝ «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, համայնքի 2012թ. բյուջեի կատարման ընթացքում կատարել 30 %-ի չափով վերաբաշխումներ: Սույն փոփոխությունները կատարել այնպես, որ բյուջետային տարվա ընթացքում կատարված փոփոխությունների հանրագումարը չգերազանցի սահմանված չափաքանակները:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՈՒՂԵՐՁ

ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂ. ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով, սահմանված կարգերին և պահանջներին համապատասխան Ձեր քննարկմանն է ներկայացվում Արմավիրի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեն:

Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեն կազմվել է քաղաքապետի քառամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝

Ընդամենը 620747,8 հազար դրամ,

Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել է 260588,3 հազ. դրամ: Պետության կողմից պատվիրակված լիազորությունների համար միջոցները 3350.0 հազ. դրամ: Պետական բյուջեից տրվող դոտացիան 356809,5 հազ. դրամ:

2012թ. գույքային հարկերի գծով նախատեսվել է 121053,0 հազ. դրամ, որից 45253,0 հազ. դրամ շենք,շին. գույքահարկ, 19861,0 հազ. դրամ հողի հարկ և 55939,0 հազ. դրամ փոխադրամիջոցների գույքահարկ: Կանխատեսման համար հիմք են հանդիսացել գույքահարկի հաշվարկման, սպասարկման և գանձման բաժնի կողմից ներկայացված հաշվարկները: Իրատեսական լինելու համար 2012թ. բյուջեում գույքահարկը կանխատեսվել է՝ մեկ տարվա հաշվարկից պակասեցրած նվազանու կողմից տրվող արտոնությունների գումարը 10%՝ 2975,0 հազ. դրամ: Բյուջեում ընդգրկվել է նաև նախորդ տարիներից կուտակված պարտքերից՝ 8000.0 հազ. դրամ, որից 4000.0 հազ. դրամ շենք,շին. գույքահարկ, 2000.0 հազ. դրամ փոխադրամիջոցների գույքահարկ և 2000.0 հազ. դրամ հողի հարկ՝ հաշվի առնելով գանձելիության մակարդակը:

Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր, նախատեսվել է 19040,3 հազ. դրամ:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարների գծով՝ պետական տուրք, նախատեսվել է 24500.0 հազ. դրամ՝ հիմք նոտարների և ՔԿԱԳ-ի կողմից տրված կանխատեսման հաշվարկները:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ համահարթեցման դոտացիա, 356809,5 հազ. դրամ հիմք «2012թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 99345,0 հազ. դրամ: Այլ եկամուտներում ընդգրկվել է նախորդ տարվա ապառքներից 10000.0 հազ. դրամ՝ 4000.0 հազ. դրամ աղբի վարձի պարտքերից և 6000.0 հողի վարձակալության պարտքերից :

Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին համապատասխան: Նախորդ՝ 2010թ. փաստացի կատարված, 2011թ. հաստատված, ճշտված բյուջեների և 2012թ. նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է (համեմատական 1):

ԾԱԽՍԵՐ

Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեով ծախսերը նախատեսվել են՝

Ընդամենը 620747,8 հազար դրամ,

այդ թվում

Ընթացիկ ծախսերի գծով՝ 620747,8 հազար դրամ,

Ոչ ֆինանսական ակտիվների՝ կապիտալ, ծախսերի գծով՝ 42079,0 հազար դրամ,

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝ - 20000.0 հազ. դրամ:

Արմավիրի քաղ. համայնքի 2012թ. բյուջեով նախատեսված ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում է (հատված 2, 3 և 6):

Համայնքի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք նախկինում գործող և 2010-2011թ.թ. բյուջեի ծախսերի փաստացի կատարված և 2012թ. համար լրացուցիչ անհրաժեշտ սպասվելիք ծախսերով:

ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 146131,2 ՀԱԶ. ԴՐԱՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ

01 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով նախատեսվել է 112650,0 հազ. դրամ:

Նախատեսվել է վարչական շենքի դահլիճի կապիտալ վերանորոգման ծախսեր 4087.0 հազ. դրամի, վարչական սարքավորումների ձեռք բերում 3000.0 հազ. դրամի: Տրանսպորտի ծախսերի մեջ ծառայողական յուրաքանչյուր մեքենայի համար վառելիքը նախատեսվել է օրական 10 լիտր բենզին:

01 բաժին 3 խումբ 1 դաս՝ «Ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայություններ» ՔԿԱԳ, ծրագրով նախատեսվել են 3989.0 հազ. դրամ:

01 բաժին 3 խումբ 3 դաս՝ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ծրագրով՝ նախատեսվել է 6981.2 հազ. դրամ,որը իր մեջ ներառել է՝

-գույքային հարկերի գանձումների գծով պայմանագրային աշխատողների և այլ աշխատողների աշխատավարձը և սոցապ. հատկացումը 6450.0 հազ. դրամի,

- գործ. և բանկային ծառայ. ծախսեր 200.0 հազ. դրամ,

-համակարգչային ծառայություն - 331.2:

01 բաժին 6 խումբ 1 դաս՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրով նախատեսվել է 22511.0 հազ. դրամ,որը իր մեջ ներառել է՝

- տեղեկատվական ծառայություն 2300.0 հազ. դրամ, որից՝

ՀՀ օրաթերթում հայտարարության տպագր. համար 600.0 հազ. դրամ

հեռուստաընկերությունում նյութերի լուսաբանման համար 1500.0 հազ. դրամ,

ձևերի տպագրություն և այլ 200.0 հազ. դրամ.

- ներկայացուցչական ծախսեր 5000.0 հազ. դրամի,

-մասնագիտ. այլ ծառայություն 1700.0հազ. դրամ, որից

կադաստր՝ 1000.0 հազ. դրամ

գնահատում 400.0 հազ. դրամ

եզրակացություն 300.0 հազ. դրամ

-նվիրատվություններ և անդամավճարներ - 2910.0հազ. դրամ, որից

- Ռուսական զորամասին նվիրատվություն 1500.0 հազ. դրամ,

- Արմավիրի կանանց ասոցացիային նվիրատվություն 100.0 հազ. դրամ,

- Կենդանաբուսաբանական այգուն նվիրատվություն 800.0 հազ. դրամ,

- «Նաիրի» հաշմ.երեխաների հ/կ նվիրատվություն 100.0 հազ. դրամ,

- անդամավճարներ՝ ՀՀԱ, ՀԱԱ,ՀՖՄ՝ 410.0 հազ. դրամ:

- պարտադիր վճարներ 300.0 հազ. դրամ,

- նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և նախագծանախահ. փաստաթղթերի փորձաքննության համար 2000.0 հազ. դրամ,

Նախատեսվել է զբոսայգում խորքային հորի և ոռոգման ցանցի կառուցում 8301.0 հազ. դրամի:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 04 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 15976.8 ՀԱԶ. ԴՐԱՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ

04 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Ոռոգում» ծրագիր 13480.1 հազ. դրամ:

04 բաժին 5 խումբ 1 դաս՝ «Ճանապարհային տրանսպորտ» ծրագիր 22496.7 հազ. դրամ, որից ճանապարհների ընթացիկ նորոգում՝ 20000.0 հազ. դրամ, նշագծում 2496.7 հազ. դրամ:

04 բաժին 9 խումբ 1 դաս՝ «Տնտեսական հարաբերություններ» ծրագիր՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր՝ -20000.0 հազ. դրամ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 93198.8 ՀԱԶ. ԴՐԱՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագիր 87679.8 հազ. դրամ:

Նախատեսվել է աղբավայրի մաքրման աշխատանքներ՝ 4797.7 հազ. դրամի, տրակտորի ձեռք բերում 8000.0 հազ. դրամի:

05 բաժին 6 խումբ 1 դաս՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ծրագիր 5519.0 հազ. դրամ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 06 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 51205.5 ՀԱԶ. ԴՐԱՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ

06 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Բնակարանային շինարարություն» ծրագիր 16691.0 հազ. դրամ՝ Բաղրամյան փող. 19/1, 21/1 և 23/1 շենքերի բակի վերակառուցում 16691.0հազ. դրամի:

06 բաժին 3 խումբ 1 դաս՝ «Ջրամատակարարում» ծրագիր 1500.0 հազ. դրամ՝ որը ներառում է բազմաբնակարան շենքերի բակերի և հասարակական ծորակների ջրամատակարարումը:

06 բաժին 4 խումբ 1 դաս՝ «Փողոցների լուսավորություն» ծրագիր 17827.0 հազ. դրամ:

06 բաժին 6 խումբ 1 դաս՝ «Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագիր 15187.5 հազ. դրամ:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 38640.6 ՀԱԶ. ԴՐԱՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ

08 բաժին 2 խումբ 1 դաս՝ «Գրադարաններ» ծրագրով 12407.7 հազ. դրամ:

08 բաժին 2 խումբ 3 դաս՝ «Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ» ծրագրով 11659.9.0 հազ. դրամ:

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակութային հիմնարկներ» ծրագրով 14573.0 հազ. դրամ: Նշված ծրագրում ընդգրկվել են՝ զրոսայգու ծախսերը 6573.0 հազ. դրամ և Համայնքային և պաշտոնական տոների և միջոցառումների գծով ծախսերը 8000.0 հազ. դրամի:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 09 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 248125.4 ՀԱԶ. ԴՐԱՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ

09 բաժին 1 խումբ 1 դաս՝ «նախադպրոցական կրթություն» ծրագրով նախատեսվել է 178516.0 հազ. դրամ, որը ընդգրկում է թիվ 1 -12 մսուր մանկապարտեզների ծախսերը:

09 բաժին 5 խումբ 1 դաս՝ «արտադպրոցական դաստիարակություն» ծրագրով 69609.4 հազ. դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 9710.0 ՀԱԶ. ԴՐԱՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ

10 բաժին 7 խումբ 1 դաս՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրով նախատեսվել է 9130.0 հազ. դրամ,որից՝

-թաղման ծախսերի մասնակի հատուցման համար 6000-ական դրամ և սոցիալապես անապահով խավերին 3000-ական դրամ մասնակի օգնություն տալու համար՝ 1500.0 հազ. դրամ: Օգնությունները տրվում են տարին ոչ ավել մեկ անգամ՝ քաղաքապետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից քաղաքացիների դիմումների ուսումնասիրության արդյունքների հիման վրա,

- սոց.անապ.խմբի օգտ. խմելու ջրի վարձի դիմաց օգնություն 150.0 հազ. դրամ,

- այլ օգնություններ՝ քաղաքապետի որոշումներով 5000.0 հազ. դրամ,

- օգնություններ ավագանու որոշումներով 2100.0 հազ. դրամ (14 X 150000դրամ):

- ՀՀ Արմավիրի մարզի անհայտ կորած ազատամ. հարազատների ՀԿ 180.0 հազ. դրամ

- Հայրենական պատերազմի վետերանների խորհրդին ցուցաբերվող նվիրատվություն 400.0 հազ. դրամ

- Հայր. պատերազմի մասնակիցներին՝ հաղթանակի 67 ամյակի առթիվ 320.0 հազ.դրամ

- Եպրաքսի Գևորգյանի էլ.էներգիայի ծախսի դիմաց օգնություն 60.0 հազ. դրամ:

<u>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ</u>

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 17759.5 ՀԱԶ. ԴՐԱՄ ԱՅԴ ԹՎՈՒՄ

11 բաժին 1 խումբ 2 դաս՝ ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 17759.5 հազ. դրամ:

ՀՈԱԿ-ներին բյուջեում նախատեսվել է ծախսերի և եկամուտների տարբերությունը: ՀՈԱԿ-ների 2012թ. նախատեսվել է ծախսերի գծով 381047.4 հազ. դրամ, եկամուտների գծով՝381047.4 հազ. դրամ, որից ծառ. գծով 88801.3 հազ. դրամ, սուբսիդիա 292246.1 հազ. դրամ: Համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կողմից 2012թ.-ին հավաքագրվող եկամուտների և նախատեսված ծախսերի ամփոփը կցվում է:

Նախորդ՝ 2010թ. փաստացի կատարված, 2011թ. հաստատված և ճշտված բյուջեների և 2012թ. նախատեսված ծախսերի՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, միջոցների տարեվերջի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտը) հավելուրդի կամ դեֆիցիտի, հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրների և առանձին ցուցանիշների, եկամուտների և ծախսերի գծով պարտքերի համեմատականները կցվում են (համեմատական 2, 3, 4, 5,6, 7 և 8):

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ. ԽԼՂԱԹՅԱՆ